

ԻՍՏՆԱԿ ԺԱՄՆԱՐԵԱՆ

Դեկտեմբերի 15-ին եղեռնագործի դաշտնի հարուածներին զոհ դնաց մի բարեսիրտ և համեստ հայ մարդ, որ իւր առատածեռն բարեգործութիւններով լայտնի էր մեր հասարակութեանը: Իսահակ Ժամհարեանը սպանուեց Մոսկուայում այն վայրկեանին, երբ երկիւղած սրտով Աստուծոյ տաճարն էր ուղում մտնել: չարագործը լանկարծ լարձակուում է միամիտ ժամաւորի վրայ և դաշտնի հարուածներով տեղն ու տեղը անչնչացնում է նրան: Օգնեցէք—աղաղակի վրայ եկեղեցուց դուրս են վազում շիթթուած աղօթողները և հաղիւ կարողանում են զինաթափ անել չարագործին, որ ինքնապաշտպանութեան դիմելով հասարակութիւնից մի քանիսին ևս վիրաւորում է: Սղեռնագործն իրեն անուանում է Յակոբջանեան և Յաղուբեան պարսկահպատակ: Ռուս թերթերը ենթադրում են, որ այս չարամիտ եղեռնագործութիւնը կապ ունի անցեալ ամառը Շուշի քաղաքում պատահած դէպքի հետ. այդ դէպքը հետեւեալն է. ամառուայ միջոցին Ժամհարեանն ընտանիքով Մոսկուայից գնում է իւր ծննդավայրը, Շուշի, որպէս զի ներկայ լինի իրենց միջոցներով նոր կառուցուած հասարակական հիւանդանոցի հանդիսաւոր բացմանը: Հանդէսը վերջանալուց և իւր համաքաղաքացիների անհուն շնորհակալութիւններն ու լարգանքները վալելուց լետոյ պ. Ժամհարեանը մտադրում է վերադառնալ Մոսկուա, սեպտեմբերի 6-ին, սակայն նոյն ամսի 4-ին ժողովարանից տուն վերադառնալու միջոցին, գիշերուայ 11-ին, կալանաւորում է անլայտ մարդկանց ձեռքով և տարւում քաղաքից դուրս դռնուղ մի կիսաւեր, անբնակ տուն: Արտեղ նրանից ստորագրութիւն են առնում, որ միւս օրը մի որոշեալ պայմանաւորուած տեղ բերէ 30,000 ռուբլի և լանձնէ այնտեղ եղողներին: Ժամհարեանը տուն վերադառնալով եղելութիւնը պատմում է, իմաց է տրւում ստիկանութեանը, ասում են, հակառակ նորա կամքի—և որոշեալ ժամին պայմանաւորուած տեղը լռնում են երկու անլայտ անձինք: Ահն այս անցքի հետ կապելով Ժամհարեանի սպանութիւնը, ենթադրում են, որ նա վրէժխնդրութեան զոհ է դնացել:

Ինչ պատճառներով էլ որ կատարուած լինի եղեռնագործութիւնը, խիստ ցաւալի է մեր հասարակութեան համար Իսահակ Ժամհարեանի պէս անձի կորուստը: Նա իւր կարողութիւնից միշտ բաժին էր հանում հասարակական կարիքներին. կարիք ունեցողը լինէր հաստատութիւն, թէ հասարակական գործիչ, միշտ վստահ էր, որ Ժամհարեանին դիմելով դատարկածեռն չէր լետ դառնալ: Ժամհարեանների բաղմաթիւ մասնաւոր և անհատական բարեգործութիւնների մէջ աչքի են ընկնում Շուշի քաղաքի նորակառուց, հոլակապ հիւանդանոցը և Կիլիկիայում գոլութիւն ունեցող որբանոցը:

Յաւիտենական հանգիստ բարեսիրտ և առատաձեռն զոհի ոսկորներին:

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՏԱՍԻԱՆՆԵՐ

ԲԱԿՅ-ի խմբագրութեան: Ռուսերէն թերթերի խմբագրութիւնները տեղական ազգերի կեանքի և գրականութեան մասին լռուածներ տպագրելիս պէտք է այնպիսի աշխատակիցներ հրաւիրեն, որոնք զերծ լինեն տեղական-կուսակցական մոլութիւններից:

Ձեր աշխատակից «Adora»-ն մոլորեցրել է ձեր թերթի ընթերցողներին «Լուման» անուանելով «կիսակրօնական», «կէսաշխարհային թերթ» (ԲԱԿՅ № 34), որպէս զի «Աւրոպական» համարուի «Մուրճը»: Իբրև պաշտօնակից խորհուրդ ենք տալիս Ձեզ՝ հրաւիրել աւելի անաչառ և բարեմիտ քննադատ, որ գրականութեան մասին խօսելիս՝ առաջնորդուի ճշմարտութեամբ և ս'չ թէ «համախոհութեամբ»:

Ն. ՆԱԽԻՋԵԻԱՆ. Մ. Վ.—Ներկայ համարն արդէն կազմուած պատրաստ էր, երբ ստացանք Ձեր երկու թարգմանութիւնները: Մէկը մնաց անտիպ:

ՄԵՐ ԳԱՆԱՌԱԿԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻՆ.— Գօրկիի վէպիկներից այնքան շատ թարգմանութիւններ կան հաւաքուած խմբագրութեանս մէջ, որ խնդրում ենք այդ հեղինակից առ այժմ նոր թարգմանութիւններ չուղարկել:

Ա. ԱԲ. Ձեր բանաստեղծութիւններ չեն կարող տպուիլ: ԲԱԳՈՒ. Ա. Գ. Գօրկիի «Արխիպ պապը և Լենկան» ստացանք կտպուի:

ԲԱԳՈՒ. Գ. Լուսինեան: Յօդուածը ստացանք. կաշխատենք տպագրել հետեւյ համարում:

Կ. ՊՕԼԻՄ. * -ին. «Յովսէփի կաթ. Հողոցմեցի» ստացանք. կտպուի հետեւեալ համարից:

ՄՈՍԿՈՒԱ. Ղ. Փ. Խմբագրութիւնը համաձայն է Ձեր վերջին առաջարկութեան: Յօդուածները կտպուին հետզհետէ:

ՂՈՒԲԱ. Խ. Ք. Փանեանց.— «Լումար»ում քարոզներ չենք տպում:

ՄՈՍԿՈՒԱ. Վահան տէր-Գրիգորեանին: Ձեր թարգմանութիւնը չի տպուիլ: Դուք աւելի չգիտէք այդ խնդրի նկատմամբ, քան գրաքննական ատեանը:

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ. Կ. Խ.— «Գաղթական կիւնը» ստացանք:

ԹԱՎՐԻՋ. Ս. Ղ.— «Նզի պանիրը» ստացանք:

Խմբագիր-հրատարակիչ ԳԻՒՅ Ա. ԳՐԱ. ԱՂԱՆԵԱՆ